ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2019
02.2019
03.2019
04.2019
05.2019
Մայիս
06.2019
07.2019
08.2019
09.2019
10.2019
11.2019
12.2019

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 26-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2019

Մայիս

թիվ 5 (249)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՄՎՄ-ՖԻՆԱՆՍ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ԱՎԱՆ» մասնաճյուղը, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «ԳՈՒԳԱՐՔ» մասնաճյուղը, «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ «Նոր Նորք» մասնաճյուղը, «ՎԱՐԿՍ ԷՅ ԷՄ» ՈՒՎԿ ՓԲԸ «ԴԻԼԻՋԱՆ» և «ՉԱՐԵՆՑԱՎԱՆ» մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող «Զվարթնոց» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 գրավատան, 1 վարկային կազմակերպության նկատմամբ տուգանք կիրառելու, 3 արտարժույթի փոխանակման կետի, 1 վարկային կազմակերպության նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 74-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

55 ՎԻճԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՄՎՄ-ՖԻՆԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 64Ա):
- ***Գրանցվել է*** «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԱՎԱՆ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/262Ա):
- ***Գրանցվել է*** «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԳՈՒԳԱՐՔ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/267Ա):
- ***Թույլատրվել է*** «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող «Ջվարթնոց» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/306Ա):
- ***Գրանցվել է*** «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության «Նոր Նորք» մասնաճյուղը (որոշում թիվ 1/325Ա):
- ***Գրանցվել են*** «ՎԱՐԿՍ ԷՅ ԷՄ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «ԴԻԼԻՋԱՆ» և «ՉԱՐԵՆՑԱՎԱՆ» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/328Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 գրավատան, 1 վարկային կազմակերպության նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 950000 դրամ գումարի չափով (որոշումներ 1/304Ա, 1/305Ա, 1/332Ա), 3 արտարժույթի փոխանակման կետի, 1 վարկային կազմակերպության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/283Ա, 1/284Ա, 1/299Ա, 1/332Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը, 17-րդ հոդվածի 5-րդ մասը, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետը, 7-րդ հոդվածի 2-րդ մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 2-րդ մասի 7-րդ կետը և 8-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 8-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով, ինչպես նաև

հաշվի առնելով «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում իրականացված օրենսդրական փոփոխությունները և էական պայմանների անհատական թերթիկների արդյունավետության գնահատման հետազոտության արդյունքում բացահայտված խնդիրները, ինչպես նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նոր պահանջները, և

նպատակ ունենալով բարելավել և արդյունավետ դարձնել սպառողներին տրամադրվող էական պայմանների անհատական թերթիկները և դրանց տրամադրման գործընթացները, միասնական գործընթացներ սահմանել պարտավորությունների՝ ժամկետից շուտ կատարման վերաբերյալ, ինչպես նաև համահունչ դարձնել գյուղատնտեսական և հիպոտեկային կրեդիտների համար իրականացված օրենսդրական փոփոխություններին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի ««Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետից հանել «ընդհանրական և» բառերը,
2) Կանոնակարգի 7-րդ կետի 8-րդ ենթակետում «օրենքով» բառից հետո լրացնել «և «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը,
3) Կանոնակարգի 7-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «10) ***կրեդիտ կամ սպառողական վարկ***՝ պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, վարկ, փոխառություն, ֆինանսական վարձակալություն (լիզինգ) կամ որևէ այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակը ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է.»,
4) Կանոնակարգի 7-րդ կետը 10-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1 ենթակետով.

   «10.1) ***հիպոտեկային կրեդիտ կամ հիպոտեկային վարկ***՝ կրեդիտավորողի տրամադրած վարկ, փոխառություն կամ այլ ֆինանսավորում, որը տրամադրվել է հետևյալ պայմաններով.

   ա. կրեդիտի տրամադրման նպատակը բնակարան ձեռք բերելը, կառուցելը, վերակառուցելը, վերանորոգելը, բարեկարգելը կամ արդիականացնելն է, և

   բ. կրեդիտի վերադարձելիությունն ապահովված է այդ բնակարանի հիպոտեկով կամ կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանի հիպոտեկով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 270-րդ հոդվածին համապատասխան, կամ բնակարանի կառուցման համար նախատեսված հողամասի, անավարտ շինարարության և գրավատուին պատկանող շինարարության համար ձեռք բերված նյութերի ու սարքավորումների հիպոտեկով՝ Հայաստանի Հանրապե-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. մայիսի 27-ին (ՀՀՊՏ N 15 (651), 17.06.2019):

տության քաղաքացիական օրենսգրքի 271-րդ հոդվածին համապատասխան, կամ կրեդիտավորողից և կրեդիտառուից անկախ պատճառներով ձեռք բերվող, կառուցվող, վերակառուցվող, վերաձորոգվող կամ արդիականացվող բնակարանը գրավադրելու անհնարինության դեպքում՝ այլ գրավով՝ պայմանով, որ գրավադրումը բացառող պայմանների վերացման դեպքում կգրավադրվի ձեռք բերվող, կառուցվող, վերակառուցվող, վերաձորոգվող կամ արդիականացվող բնակարանը, և

գ. կրեդիտը տրամադրվել է որոշակի հատուցման դիմաց:

Սույն կարգի իմաստով հիպոտեկային կրեդիտ են համարվում նաև սույն կետում նշված կրեդիտների վերաֆինանսավորման նպատակով կրեդիտառուներին տրամադրված վարկերը կամ փոխառությունները»,

5) Կանոնակարգի 7-րդ կետը 13-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1 ենթակետով.

«13.1) Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման պայմանագիր (այսուհետ՝ սույն կարգում նաև ***Հիպոտեկային պայմանագիր կամ հիպոտեկային կրեդիտավորման պայմանագիր***)՝ պայմանագիր, որով կրեդիտավորողը սպառողին տրամադրում կամ պարտավորվում է տրամադրել բնակարանային հիպոտեկային կրեդիտ:»,

6) Կանոնակարգի 7-րդ կետի 14-րդ ենթակետում «կրեդիտավորման (վարկային)» բառերից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտավորման» բառերը,

7) Կանոնակարգի 7-րդ կետի 15-րդ ենթակետում «մասին»» բառից հետո լրացնել «և «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին»» բառերը, իսկ «օրենքով» բառը փոխարինել «օրենքներով» բառով,

8) Կանոնակարգի 7-րդ կետի 16-րդ ենթակետում «փաստաթուղթ» բառից հետո լրացնել «կամ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ» բառերը,

9) Կանոնակարգի 7-րդ կետի 19-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

10) Կանոնակարգի 7-րդ կետի 20-րդ ենթակետում «տվյալ կրեդիտի» և «կրեդիտի» բառերից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտի» բառերը,

11) Կանոնակարգի 7-րդ կետի 21-րդ ենթակետում «կրեդիտի» բառից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտի» բառերը,

12) Կանոնակարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետում «հոդվածը» բառից հետո լրացնել «,իսկ հիպոտեկային կրեդիտների դեպքում՝ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը:» բառերը, իսկ «վճարները:» բառից հետո լրացնել «Հիպոտեկային կրեդիտների դեպքում բանավոր տեղեկացնում է սպառողին «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վաղաժամկետ մարման ձևի, ընտրության հնարավորության, ինչպես նաև կիրառվող տույժ/տուգանքների և օրենքով սահմանված այլ անբարենպաստ հետևանքների մասին:» նախադասությունը,

13) Կանոնակարգի 10-րդ կետը 2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ ենթակետով.

«2.1) Հիպոտեկային կրեդիտների դեպքում բանավոր տեղեկացնում է նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված սպառողի իրավունքների մասին:»,

14) Կանոնակարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

15) Կանոնակարգի 18-րդ կետում «ավանդային» բառից հետո լրացնել «, հիպոտեկային» բառը,

16) Կանոնակարգի 21-րդ կետի 19-րդ ենթակետում «էլեկտրոնային ստորագրությամբ» բառերը փոխարինել «հաստատող մարմնի (իրավասուի) ստորագրությամբ» բառերով,

17) Կանոնակարգի 22-րդ կետի 7-րդ ենթակետում «թղթային օրինակը» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային տարբերակը՝ հաստատող մարմնի (իրավասուի) ստորագրությամբ» բառերը,

18) Կանոնակարգը 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1-րդ և 22. 2-րդ կետերով.

«22.1 Ֆինանսական կազմակերպությունը ապահովում է, որ հիպոտեկային կրեդիտավորման պայմանագիրը, բացի սույն կանոնակարգի 20-րդ կետով, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 12-րդ հոդվածներով սահմանված տեղեկատվությունից, ներառի նաև.

1) Հիպոտեկային կրեդիտի տրամադրման ձևը (միանվագ կամ փուլային),

2) տոկոսագումարների հաշվարկման կարգը, իսկ արտարժութային հիպոտեկային կրեդիտների դեպքում նշվում է նաև փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվող արտարժույթի փոխարկման փոխարժեքի մասին,
3) հիպոտեկային կրեդիտի գումարի մարման կարգը՝ հավասարաչափ (անուիտետային), թե ոչ հավասարաչափ (դիֆերենցված),
4) սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցների և դրանց չափերի վերաբերյալ նշումներ, ինչպես նաև սպառողի վերաբերյալ տեղեկատվությունը վարկային բյուրոյին տրամադրելու վերաբերյալ: Ընդ որում, վարկային բյուրոյի վերաբերյալ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով և (կամ), այլ ձևով (Օրինակ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ *ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿ* ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԿԱՏԱՐՄԱՆ, ԹԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ),
5) եթե տրամադրվում է արտարժութային հիպոտեկային կրեդիտ, նշում արտարժույթի տեսակի (օրինակ՝ դոլար, եվրո), արտարժույթի կիրառվող փոխարկման փոխարժեքի մասին (օրինակ՝ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԻ ՄԱՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓՈԽԱՐԿՄԱՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ), ինչպես նաև այն մասին, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ կրեդիտի մարումների վրա,
6) եթե պայմանագրում սահմանված են պայմաններ, որոնք որոշվում են այլ փաստաթղթով սահմանված ծառայության ընդհանուր պայմաններով և այդ ծառայության ընդհանուր պայմանները կարող են փոփոխվել պայմանագրի գործողության ընթացքում, ապա պայմանագրում պետք է լինի նշում այդ մասին,
7) եթե պայմանագրում հղում է կատարվում պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններին (օրինակ՝ ներքին իրավական ակտերին, ծառայության ընդհանուր պայմաններին), ապա առնվազն նշվում են այդ պայմանների նույնականացման տվյալները՝ պայմանների լրիվ անվանումը, պայմանների ընդունման ամսաթիվը, նույնականացման կամ հաշվառման համարը և ընդունող մարմնի անվանումը: Այն դեպքում, երբ հղում է կատարվում այլ մարմնի կողմից հաստատված պայմաններին և հնարավոր չէ նշել նույնականացման տվյալներ, ապա առնվազն նշվում է այն ժամկետը, որի համար գործում են այդ պայմանները: Եթե պայմանագրում նշված պայմանները հրապարակային են, ապա հղում է կատարվում նաև համապատասխան աղբյուրին (ինտերնետային էջ/բաժին/ենթաբաժին), եթե պայմանները ոչ հրապարակային են, ապա տրամադրվում է վավերացված թղթային օրինակը կամ էլեկտրոնային տարբերակը՝ հաստատող մարմնի (իրավասուի) ստորագրությամբ: Ընդ որում, նշվում են նաև այդ պայմանների փոփոխության մասին սպառողներին ծանուցելու եղանակը և ժամկետները,
8) հիպոտեկային կրեդիտի պայմանագրի գործողության ընթացքում գրավի մոնիտորինգի (ստուգման) ընթացակարգերը, պարբերականությունը և հնարավոր բացասական հետևանքները,
9) «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված նախազգուշացումները,
10) «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված իրավունքները, վաղաժամկետ մարման ընթացակարգերը, այդ թվում՝ կիրառվող տույժ/տուգանքները և բոլոր անբարենպաստ պայմանները:
11) 22. 2 Հիպոտեկային կրեդիտը մարելու ժամանակացույցը, բացի «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունից, ներառում է նաև.
    ա. Հիպոտեկային կրեդիտի մայր գումարի մարման ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ) և ընդհանուր գումարը,
    բ. Տոկոսագումարների վճարների ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ) և տոկոսագումարների ընդհանուր գումարը,
    գ. Տոկոսագումարներից բացի, հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի ընթացքում այլ վճարների վճարման ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ), վճարման կարգը և այդ վճարների ընդհանուր գումարը,

դ. Այն դեպքում, երբ հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի ընթացքում սպառողը վճարելու է ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների համար, և այդ վճարների չափի մասին առկա է տեղեկատվություն, ապա նաև այդ վճարների կատարման ժամանակացույցը:»,

19) Կանոնակարգի 23-րդ կետում «կրեդիտավորման» բառից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտավորման» բառերը,

20) Կանոնակարգը 27-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 27.1-րդ կետով.

21) «27.1 Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը, բացի «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունից, սպառողին գրավոր՝ այդ թվում էլեկտրոնային եղանակով, վճարման իրականացումից առնվազն 7 օր առաջ տեղեկացնում է այն մասին, որ ֆինանսական կազմակերպության պահանջով հիպոտեկային պայմանագրի ընթացքում սպառողը պետք է վճարի ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների համար, և այդ վճարների կատարման ժամկետների, չափի և չկատարման դեպքում բացասական հետևանքների մասին:»,

22) Կանոնակարգի 28-րդ կետում «կրեդիտը» բառից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտը» բառերը,

23) Կանոնակարգի 30-րդ կետում «փոփոխությունները,» բառից հետո լրացնել «իսկ հիպոտեկային կրեդիտների դեպքում «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվության փոփոխությունները,» բառերը, իսկ նույն կետի 2-րդ նախադասությունում «երբ» բառից հետո լրացնել «օրենքով նախատեսված հիմքերով» բառերը, իսկ «պայմանագրի,» բառից հետո լրացնել «հիպոտեկային կրեդիտի պայմանագրի» բառերը,

24) Կանոնակարգի 35-րդ կետից հանել «Այն դեպքում, երբ սպառողը Կազմակերպության հետ որպես հաղորդակցման եղանակ ընտրել է փոստային կապը, ֆինանսական կազմակերպությունը վերոնշյալ տեղեկատվությունը հայտնում է նաև փոստային եղանակով:» նախադասությունը,

25) Կանոնակարգի 36-րդ կետում բոլոր «կրեդիտի» բառերից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտի» բառերը,

26) Կանոնակարգի 39-րդ կետում «Հայաստանի Հանրապետության օրենքով» բառից հետո լրացնել «, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը,

27) Կանոնակարգի 45-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

28) Կանոնակարգի 47-րդ կետում «կրեդիտը» բառից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտը» բառերը,

29) Կանոնակարգի Գլուխ 9-ի վերնագրում «ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ» բառից հետո լրացնել «ԿԱՄ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ» բառերը,

30) Կանոնակարգի 56-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«56. Սպառողի կրեդիտային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո կրեդիտավորողն իր կողմից առաջարկվող կրեդիտի պայմանների և սպառողի կողմից տրված փաստաթղթերի հիման վրա նախքան կրեդիտավորման պայմանագրի, հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի կնքումը սպառողին տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի (ըստ համապատասխան Ձևանմուշների): «Հիպոտեկային կրեդիտների դեպքում Անհատական թերթիկը սպառողին տրամադրվում է նաև որպես «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գրավոր առաջարկ՝ օֆերտա, եթե անհատական թերթիկի հետ միասին ներկայացվել է նաև կրեդիտավորման պայմանագրի նախագիծը: Օֆերտային վերաբերող սույն կետի դրույթները գործում են, եթե կրեդիտավորողը այլ ձևաչափով օֆերտայի տրամադրում չի սահմանել:»,

31) Կանոնակարգի 57-րդ կետի 1-ին ենթակետում «կրեդիտավորման» բառից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտավորման» բառերը, իսկ «ժամանակացույցի» բառից հետո լրացնել «և (կամ) փոխարժեքի» բառերը, «տարբերվել,» բառից հետո լրացնել «իսկ արտարժութային գյուղատնտեսական վարկերի, հիպոտեկային կրեդիտների, վճարային քարտերով տրամադրված վարկային գծերի դեպքում նաև փոխարժեքի, որը ամսաթվից կախված կարող է փոփոխվել,» բառերը,

32) Կանոնակարգի 57-րդ կետի 2-րդ ենթակետում «կրեդիտավորման» բառից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտավորման» բառերը, «կրեդիտի» բառերից հետո լրացնել «կամ հիպոտեկային կրեդիտի» բառերը,

33) Կանոնակարգի 57-րդ կետի 6-րդ ենթակետում «կրեդիտավորման» բառից հետո լրացնել «, հիպոտեկային կրեդիտավորման» բառերը, «ժամանակացույցի» բառից հետո լրացնել «և (կամ) փոխարժեքի» բառերը,

34) Կանոնակարգի 59-րդ կետում «այցի դեպքում» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե առձեռն եղանակն ընտրելու դեպքում սպառողը (երաշխավորը) չի այցելում կրեդիտավորողի տարածք կամ այցելում է, սակայն հնարավոր չի լինում նույնականացնել սպառողին (երաշխավորին) և կրեդիտավորողի մոտ առկա է էլեկտրոնային փոստի հասցե, ապա կրեդիտավորողն ուղարկում է Անհատական թերթիկի էլեկտրոնային տարբերակը:» բառերը,

35) Կանոնակարգի 63-րդ կետում «աշխատանքային օր:» բառերից հետո լրացնել «Այն դեպքում, երբ սպառողը (երաշխավորը) ցանկանում է անմիջապես ստորագրել Անհատական թերթիկը, ապա կրեդիտավորողը բավարար ժամանակ է ընձեռում սպառողին (երաշխավորին), որպեսզի մանրամասն կարդա Անհատական թերթիկը: Առցանց տիրույթում՝ ֆինանսական կազմակերպության ընթացակարգերով նույնականացված սպառողի անձնական էջի կամ առցանց այլ եղանակների միջոցով տրամադրվող կրեդիտների դեպքում, կրեդիտավորողը ապահովում է, որ ստորագրման ենթակա դաշտերում առկա հավաստող նշումը (օրինակ՝ checkbox) ակտիվանա նվազագույնը 3 րոպե անց: Իսկ տեխնիկածրագրային անհնարինության դեպքում, աչքի ընկնող ձևով նշվում է Անհատական թերթիկը կարդալու կարևորության մասին:» նախադասությունը, իսկ «կնքել կրեդիտավորման» բառերից հետո լրացնել «հիպոտեկային կրեդիտավորման» բառերը,

36) Կանոնակարգի 64-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

37) Կանոնակարգի 65-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«65. Անհատական թերթիկում տվյալները լրացվում են լրացման ուղեցույցի օգնությամբ: Լրացման ուղեցույցը նախատեսված է միայն ֆինանսական կազմակերպության համար և չի տրամադրվում սպառողին:

Սպառողական վարկի Անհատական թերթիկը (Հավելված 1 Ձևանմուշ 1 և Ձևանմուշ 1.1) լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի Ձևանմուշ 1.2-ի: Վարկային գծերի (օվերդրաֆտների) Անհատական թերթիկը (Հավելված 1 Ձևանմուշ 2 և Ձևանմուշ 2.1) լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի Ձևանմուշ 2.2-ի: Գյուղատնտեսական վարկերի Անհատական թերթիկը (Հավելված 1 Ձևանմուշ 3 և Ձևանմուշ 3.1) լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի Ձևանմուշ 3.2-ի: Հիպոտեկային կրեդիտների Անհատական թերթիկը (Հավելված 1 Ձևանմուշ 4 և Ձևանմուշ 4.1) լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի Ձևանմուշ 4.2-ի:»,

38) Կանոնակարգի 66-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«66. Կրեդիտավորողը չի կարող փոխել Անհատական թերթիկի տեքստը, տեղեկատվության դասավորվածությունը, հերթականությունը և դիզայնը, սակայն կարող է

1) ավելացնել իր ապրանքային նշանը (լոգոն),
2) փոփոխել թղթի երանգները՝ ելնելով մարքեթինգային քաղաքականությունից,
3) անհրաժեշտության դեպքում թերթիկի երկրորդ էջում ավելացնել մեկից ավելի երաշխավորողների կամ համավարկառուների մասին տեղեկատվություն՝ նույնանման ձևաչափով,
4) եթե առկա չէ տվյալ վարկի գծով երաշխավոր կամ համավարկառու, ապա տրամադրել առանց երաշխավորողի կամ համավարկառուի մասին տեղեկատվություն պարունակող թերթիկները:»,

39) Կանոնակարգը 79-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ9 80-րդ և 81-րդ կետերով.

«80. Այն դեպքում, երբ ՖԳԻԱՍ-ի միջոցով հնարավոր է իրականացնել կրեդիտավորման, հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրով նախատեսված պարտավորությունների մարում, ապա կրեդիտավորողը ապահովում է, որպեսզի վարկի մարման էջում, բացի «վարկի հերթական մարում» հրահանգից, առկա լինի նաև «վարկի մարում ժամկետից շուտ» հրահանգը: Ընդ որում՝ «վարկի մարում ժամկետից շուտ» հրահանգը սեղմելուց հետո սպառողին (վճարում իրականացնողին) հաղորդագրության միջոցով բացահայտվում է այն մասին, որ «վերջինս չի հանդիսանում վարկի հերթական մարում, և կատարված վճարումը ուղղվելու է վարկի մայր գումարի մարմանը՝ համապատասխանաբար փոփոխվելով վարկի մարման ժամանակացույցը, եթե սպառողը (վճարում իրականացնողը) այլ հրահանգ չի տալիս»: Հնարավորության դեպքում հիպոտեկային կրեդիտների «ժամկետից շուտ մարման» հրահանգից հետո սպառողին (վճարում իրականացնողին) հաղորդագրության միջոցով բացահայտվում է նաև հնարավոր տույժ, տուգանքների և հնարավոր այլ հետևանքների մասին: Գործողության ավարտին ՖԳԻԱՍ-ի էկրանին հայտնվող հաղորդագրության միջոցով բացահայտվում է այն մասին, որ իրականացվել է ժամկետից շուտ մարում, փոփոխվել է տվյալ վարկի մարման ժամանակացույցը և հերթական մարման օրվա մասին տեղեկանալու և նոր ժամանակացույց ստանալու համար սպառողը մեկ աշխատանքային օր հետո կարող է դիմել իրեն սպասարկող կազմակերպությանը:

81. Այն դեպքում, երբ ՖԳԻԱՍ-ի միջոցով սպառողը (վճարում իրականացնողը) իրականացնում է ժամանակացույցով նախատեսված օրը վարկի հերթական մարում և ժամկետանց պարտավորության մարում կամ դրանցից մեկը և վճարման գումարը գերազանցում է հերթական մարման կամ ժամկետանց պարտավորության գումարի չափը, ապա ՖԳԻԱՍ-ի էկրանին հայտնվող հաղորդագրության միջոցով բացահայտվում է այն մասին, որ վճարման ենթակա գումարները գերազանցող վճարումները դիտարկվում են պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում) և նվազեցվում են վարկի մայր գումարը, ինչպես նաև համամասնորեն կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող կրեդիտավորողի եկամուտը ձևավորող վճարները, եթե սպառողը (վճարում իրականացնողը) այլ հրահանգ չի տվել: Հնարավորության դեպքում կրեդիտավորողը ապահովում է ավել կատարված գումարների նկատմամբ ՖԳԻԱՍ-ը շահագործող ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող այլ հրահանգներ տալու հնարավորություն՝ սահմանելով հրահանգների հակիրճ նկարագրությունը»,

40) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ ԳԼՈՒԽ 11-ով.

«ԳԼՈՒԽ 11. ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ, ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՄԱՐԵԼՈՒ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՊԱՌՈՂԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

82. Սույն գլխով սահմանվում են կրեդիտավորման և հիպոտեկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները (այսուհետ՝ պարտավորություններ) ժամկետից շուտ կատարելու (մարելու) ընթացակարգերը և այդ մասին սպառողին ներկայացվող (բացահայտվող) տեղեկատվությունը:
83. Կրեդիտավորողի տարածքում, կրեդիտը, այդ թվում՝ հիպոտեկային կրեդիտը, սպասարկող ֆինանսական կազմակերպության գործունեության վայրում, պայմանագրով նախատեսված պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում սպառողին (վճարում իրականացնողին) ներկայացվող տեղեկատվությունը կարող է լինել գրավոր կամ բանավոր, իսկ ՖԳԻԱՍ-ով կամ առցանց տարբերակով պարտավորությունների ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում՝ համապատասխանաբար ՖԳԻԱՍ-ի էկրանին կամ հեռահար սպասարկման սարքավորման էկրանին հայտնվող հաղորդագրությունների միջոցով:
84. Այն դեպքում, երբ վաղաժամկետ մարումը իրականացվում է ՖԳԻԱՍ-ով կամ առցանց տարբերակով, ապա սպառողին (վճարում իրականացնողին) ՖԳԻԱՍ-ի էկրանին հայտնվող հաղորդագրությունների կամ առցանց եղանակով տրամադրվում է սույն Կանոնակարգի 80-րդ կետով սահմանված տեղեկատվությունը:
85. Այն դեպքում երբ կազմակերպությունում առկա է սպառողի հետ էլեկտրոնային (հեռահար) եղանակով հաղորդակցման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն (էլեկտրոնային փոստի հասցե, բջջային հեռախոսահամար և այլն), ապա կազմակերպությունը, պարտավորությունների ժամկետից շուտ կատարելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային հասցեի, կարճ հաղորդագրության կամ հեռախոսազանգի միջոցով տեղեկացնում է սպառողին այն մասին, որ վերջինիս վարկի գծով իրականացվել է պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում), տվյալ մարումը ուղղվել է վարկի մայր գումարի նվազմանը և համամասնորեն նվազեցվել է կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող կրեդիտավորողի եկամուտը ձևավորող վճարները: Տեղեկացվում է նաև այն մասին, որ փոփոխվել է հետագա մարումների ժամանակացույցը և, որ նոր մարումներով ժամանակացույց ստանալու, ինչպես նաև հերթական մարման վերաբերյալ տեղեկանալու համար մեկ աշխատանքային օր հետո սպառողը կարող է դիմել վարկատու կազմակերպությանը:
86. Սպառողական կրեդիտների դեպքում.
    1) Պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում) է համարվում սպառողի (վճարում իրականացնողի) կողմից պարտավորությունների մարմանն ուղղված վճարման իրականացումը, որը չի համընկնում կրեդիտավորման պայմանագրի մարման ժամանակացույցով նախատեսված վճարման (հերթական վճարում) ամսաթվի կամ վճարման ենթակա պարտավորության գումարի չափի հետ:
    2) Պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում) չի համարվում եթե.
        ա. առկա է սպառողի (վճարում իրականացնողի) գրավոր հանձնարարականը, որտեղ նշված է վճարման «այլ նպատակ» (օրինակ՝ ուղղել հերթական 2 ամիսների տոկոսագումարների կամ մայր գումարի մարմանը և այլն) կամ,

բ. Սպառողը (վճարում իրականացնողը) տվյալ պայմանագրի մարման ժամանակացույցով նախատեսված վճարումը չի կատարել:

3) Կրեդիտավորողը, պարտավորությունների ժամկետից շուտ կատարումը (մարումը) իրականացնում է սպառողի (վճարում իրականացնողի) կողմից վճարվող գումարի չափով նվազեցնելով վարկի մայր գումարը, համամասնորեն նվազեցնելով կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող կրեդիտավորողի եկամուտը ձևավորող վճարները, եթե սպառողը (վճարում իրականացնողը) վճարման այլ հանձնարարական չի տվել:

4) Այն դեպքում, երբ սպառողը (վճարում իրականացնողը) իրականացնում է ժամանակացույցով նախատեսված օրը վարկի հերթական մարում և ժամկետանց պարտավորության մարում կամ դրանցից մեկը և վճարման գումարը գերազանցում է հերթական մարման կամ ժամկետանց պարտավորության գումարի չափը, ապա հերթական մարման վճարը կամ ժամկետանց պարտավորության գումարի չափը գերազանցող գումարը դիտարկվում է որպես պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում) և վճարման օրը նվազեցվում է վարկի մայր գումարից: Վճարման օրը համամասնորեն նվազեցվում են կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող կրեդիտավորողի եկամուտը ձևավորող վճարները: Բացառությամբ այն դեպքերի, երբ սպառողը (վճարում իրականացնողը) տվել է վճարվող գումարի վերաբերյալ այլ հանձնարարական. օրինակ՝ ուղղել հերթական 2 ամիսների տոկոսագումարների և(կամ) մայր գումարի մարմանը և այլն:

5) Այն դեպքում, երբ սպառողը (վճարում իրականացնողը) պայմանագրով նախատեսված պարտավորությունները իրականացնում է ժամկետից շուտ կրեդիտավորողի կամ սպասարկող ֆինանսական կազմակերպության գործունեության վայրում, ապա սպասարկող աշխատակիցը սպառողին (վճարում իրականացնողին) գրավոր կամ բանավոր ձևով տեղեկացնում է այն մասին, որ.

ա. եթե սպառողի (վճարում իրականացնողի) կողմից այլ հանձնարարական չի տրվում, ապա պարտավորությունների ժամկետից շուտ կատարված (մարված) վճարումը ուղղվելու է վարկի մայր գումարի մարմանը, համամասնորեն նվազեցվելու են կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող կրեդիտավորողի եկամուտը ձևավորող վճարները և վճարված գումարի չափով փոփոխվելու է վարկի մարման ժամանակացույցը,

բ. հերթական վճարման իրականացման ամսաթվի և գումարի մասին, ինչպես նաև տեղեկացնում է մարման նոր ժամանակացույցի տրամադրման վերաբերյալ սույն Կանոնակարգի 36-րդ կետով սահմանված գործողությունների մասին:

6) Այն դեպքում, երբ սպառողը (վճարում իրականացնողը) իրականացնում է վարկի հերթական մարում և ժամկետանց պարտավորության մարում կամ դրանցից մեկը և նախատեսված վճարումը գերազանցում է հերթական մարման գումարը կամ ժամկետանց պարտավորության գումարի չափը, ապա սպառողին (վճարում իրականացնողին) բանավոր ձևով տեղեկացվում է նաև, որ ավել կատարված գումարները դիտարկվում են պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում)՝ նվազեցնելով վարկի մայր գումարը և համամասնորեն՝ կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող կրեդիտավորողի եկամուտը ձևավորող վճարները, եթե սպառողը (վճարում իրականացնողը) այլ հրահանգ չի տալիս:

87. Հիպոտեկային կրեդիտների դեպքում.

1) Սպառողի (վճարում իրականացնողի) կողմից պարտավորությունների մարմանն ուղղված վճարման իրականացումը, որը չի համընկնում կրեդիտավորման պայմանագրի մարման ժամանակացույցով նախատեսված վճարման (հերթական վճարում) ամսաթվի կամ վճարման ենթակա պարտավորության գումարի չափի հետ, համարվում է վաղաժամկետ մարում միայն այն դեպքում, երբ

ա. Վաղաժամկետ մարումը սպառողի համար չի առաջացնում տույժ, տուգանք վճարելու կամ այլ բացասական հետևանքներ կրելու պարտականություն, կամ

բ. սպառողը (վճարում իրականացնողը) պահանջում է, որ վճարումը համարվի վաղաժամկետ մարում:

2) Կրեդիտավորողը, պարտավորությունների ժամկետից շուտ կատարումը (մարումը) իրականացնում է սպառողի (վճարում իրականացնողի) կողմից վճարվող գումարի չափով նվազեցնելով վարկի մայր գումարը և համամասնորեն՝ կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող կրեդիտավորողի եկամուտը ձևավորող վճարները, եթե սպառողը (վճարում իրականացնողը) այլ հրահանգ չի տալիս:

3) Այն դեպքում, երբ սպառողը (վճարում իրականացնողը) պայմանագրով նախատեսված պարտավորություններն իրականացնում է ժամկետից շուտ՝ կրեդիտավորողի կամ սպասարկող ֆինանսական կազմակերպության գործունեության վայրում, ապա սպասարկող աշխատակիցը սպառողին (վճարում իրականացնողին) գրավոր կամ բանավոր ձևով տեղեկացնում է.
   ա. «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված սպառողի (վճարում իրականացնողի) ընտրության իրավունքի մասին,
   բ. սույն Կանոնակարգի 87-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված գործողությունների մասին,
   գ. կիրառվող տույժ, տուգանքների, տոկոսագումարների վերահաշվարկման դեպքերի և կարգի մասին, կրեդիտի գումարի վերաներդրման արդյունքում վճասների փոխհատուցման կամ լրացուցիչ եկամուտների դեպքում՝ ապագա ծախսերի նվազեցման մասին, ինչպես նաև հնարավոր այլ հետևանքների մասին,
   դ. հերթական վճարման իրականացման ամսաթվի և գումարի մասին, ինչպես նաև տեղեկացնում է սույն Կանոնակարգի 36-րդ կետով սահմանված գործողությունների մասին:»,

2. Կանոնակարգում «Հավելված 5» բառերը դրա հոլովաձևերով փոխարինել «Հավելված 2»-ով բառերով՝ համապատասխան հոլովաձևերով, իսկ «Հավելված 6» բառերը դրա համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Հավելված 3» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

3. Կանոնակարգի Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի Հավելված 4-ը, Հավելված 5-ը և Հավելված 6-ը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վաթսուներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
6 հունիսի 2019 թ., N 74-Ն

Հավելված 1
Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի մայիսի 27-ի թիվ 74-Ն որոշմամբ

«Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման Հավելվածի
Ձևանմուշ 1
(Սպառողական վարկ)

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ
ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ №

Մինչև վարկային պայմանագիր կնքելը վարկատուն պարտավոր է Ձեզ տրամադրել սույն թերթիկը:

Սույն թերթիկի պայմանները գործում են մինչև _____

Կարդացեք, մտածեք և նոր որոշումներ: Հարցերի դեպքում՝ (հեռախոսահամար)

Վարկատուի անվանում _____

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1 Անվանում _____

1.2 Գումար _____

1.3 Արժույթ _____

1.4 ժամկետ _____

1.5 Տարեկան անվանական % _____
Լրացվել չի կարող դատարկ Ձեր վարկի տարեկանացված:

1.6 Տարեկան փաստացի % _____
Լրացվում է վարկի պայմանագրում և պարտադիր պարտադիր վճարների:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Մարումների հաճախականություն

- Մայր գումար _____
- Տոկոսագումար _____
- Այլ պարբերականություն _____

2.2 Տանկավճար _____

3. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 ժամկետից շուտ ամբողջական կամ մասնակի վարկը՝ առանց տուգանքների վճարելու:

3.2 ժամկետից շուտ վարկին ուղղված վճարումներ կատարելու դեպքում առանձնացված վարկի մարման նոր գրաֆիկ:

3.3 Ընտրել վարկատուի հետ հաղորդակցվելու եղանակը (էլեկտրոնային, փոստային հասցե ...):

* Պայմանագրում և թերթիկում կարող են տարբերվել միայն տարեկան փաստացի տոկոսագումարը, 1-ին մարման ամսաթիվն ու գումարը, քանի օր, կախված պայմանագրի կնքման ամսաթվից, կարող են փոփոխվել փոխարժեքը և մարման ժամանակացույցը:

4. ՄԱՐՈՒՄՆԵՐ

4.1 1-ին մարման ամսաթիվ* և գումար _____

4.2 Մարման ընդհանուր գումար /Ծրթ/ _____

4.3 Մայր գումար _____

4.4 Տոկոսագումար _____

4.5 Այլ վճարներ /Ծրթ չեխ/ _____

1. _____ _____
2. _____ _____
3. _____ _____
4. _____ _____
5. _____ _____
6. _____ _____

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5.1 Գրավ _____

5.2 Երաշխավորություն _____

6. ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔ

6.1 Մայր գումարը չվճարելու դեպքում _____

6.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում _____

6.3 Այլ վճարները չվճարելու դեպքում _____

6.4 ժամկետում պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝

1. _____
2. _____
3. _____
4. _____

7. ՀԻՇԵՔ

7.1 Դուք կարող եք ձեռնարկել «վատ վարկային պատմության»

Վարկի չմարման դեպքում Ձեր վարկային պատմությունը կվատանա, ինչը կխոչընդոտի հետագայում վարկ ստանալուն:

7.2 Ձեր գրավի վրա կարող է բռնագանձում տարածվել , ինչպես նաև դուք կարող եք զրկվել Ձեր գույքից

Եթե գրավի վաճառքից հնարավոր չէ բավարար գումար ստանալ,ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.3 Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ստանալու Ձեր վարկային պատմությունը ԱԶՌԱ վարկային բյուրոյից

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

7.4 Դուք իրավունք ունեք ստանալ հիշեցում առկա պարտավորության վերաբերյալ

Պարտավորության կատարման օրից 1 օր առաջ վարկատուն Ձեր նախընտրած եղանակով կտեղեկացնի (sms, էլ. հասցե, փոստ) առկա պարտավորության մասին:

8. ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է

8.1 Պայմանագիր կնքելուց առաջ տեղեկացնել, որ եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը եզրկվելու եք Ձեր գույքից:

8.2 Տրամադրել վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:

8.3 Հաղորդակցումը իրականացնել Ձեր կողմից ընտրված եղանակով:

8.4 7 օր առաջ ծանուցել պայմանագրի պայմանների փոփոխության մասին:

8.5 1 օր առաջ հիշեցնել առկա պարտավորության վերաբերյալ:

8.6 Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելուց մասին:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ

8.7 Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:

8.8 Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

9. Հաստատում եմ, որ սույն թերթիկում ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են

_____ վարկատուի ստորագրություն

_____ ամսաթիվ (թերթիկի տրամադրման)

Վարկատուի անվանում _____

Գտնվելու վայր _____

Հեռ., էլ. հասցե _____

10 Հաստատում եմ, որ նախքան պայմանագրի կնքումը ստացել և հասկացել եմ սույն թերթիկում ներկայացված բոլոր տեղեկությունները

_____ վարկառուի ստորագրություն

_____ ամսաթիվ (թերթիկի ստացման)

Վարկատուի անուն, ազգանուն _____

Ընտկության վայր _____

Հեռ., էլ. հասցե _____

Վարկատուի հետ հարաբերակցման եղանակ _____

11. Ցանկանում եմ երաշխավորություն տրամադրել ծանոթացել եմ պայմաններին և գիտակցում եմ երաշխավորության տրամադրման հետևանքները

_____ երաշխավորի ստորագրություն

_____ ամսաթիվ (թերթիկի ստացման)

Երաշխավորի անուն, ազգանուն _____

Ընտկության վայր _____

Հեռ., էլ. հասցե _____

Վարկատուի հետ հարաբերակցման եղանակ _____

Հավելված 1.1
(Սպառողական վարկ առանց երաշխավորի)

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ
ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ №

Մինչև վարկային պայմանագիր կնքելը վարկատուն պարտավոր է Ձեզ տրամադրել այս թերթիկը:

Սույն թերթիկի պայմանները գործում են մինչև _____

Կարդացեք, մտածեք և նոր որոշեք: Հարցերի դեպքում՝ (հեռախոսահամար)

Վարկատուի անվանում _____

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1 Անվանում _____

1.2 Գումար _____

1.3 Արժույթ _____

1.4 Ժամկետ _____

1.5 Տարեկան անվանական % _____
Հիմնով հաշվարկված է Ձեր վարկի տոկոսադրույքը:

1.6 Տարեկան փաստացի % _____
Ներառում է վարկի տրամադրման և սպասարկման պարտադիր վճարները:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Ապահովություն ծառայություններ

- Մայր գումար _____
- Տոկոսագումար _____
- Այլ պարբերականություն _____

2.2 Տանկավճար _____

3. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Ժամկետից շուտ ցանկացած չափով մարել վարկը՝ առանց տույժեր/տուգանքներ վճարելու:

3.2 Ժամկետից շուտ վարկին ուղղված վճարումներ կատարելու դեպքում ստանալ վարկի մարման նոր գրաֆիկ:

3.3 Ընտրել վարկատուի հետ հաղորդակցվելու եղանակը (էլեկտրոնային, փոստային հասցե, ...):

*Պայմանագրում և թերթիկում կարող են տարբերվել միայն տարեկան փաստացի տոկոսադրույքը, 1-ին մարման ամսաթիվն ու գումարը, քանի որ, կախված պայմանագրի կնքման ամսաթվից, կարող են փոխվել փոխարժեքը և մարման ժամանակացույցը:

4. ՄԱՐՈՒՄՆԵՐ

4.1 1-ին մարման ամսաթիվ* և գումար _____

4.2 Մարման ընդհանուր գումար _____
Որից

4.3 Մայր գումար _____

4.4 Տոկոսագումար _____

4.5 Այլ վճարներ _____
Որ թվով

1. _____ _____
2. _____ _____
3. _____ _____
4. _____ _____
5. _____ _____
6. _____ _____

5. ԱՊԱՀՈՎԱԳՈՒԹՅՈՒՆ

5.1 Գրավ _____

5.2 Երաշխավորություն _____

6. ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔ

6.1 Մայր գումարը չվճարելու դեպքում _____

6.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում _____

6.3 Այլ վճարները չկատարելու դեպքում _____

6.4 Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումները հատկանշվում են հետևյալ հերթականությամբ՝

1. _____
2. _____
3. _____
4. _____

7. ՀԻՇԵՔ

7.1 **Ձեզ կարող եք ձևավորել «վատ վարկային պատմություն»**

Վարկի չմարման դեպքում Ձեր վարկային պատմությունը կվատանա, ինչը կխոչընդոտի հետագայում վարկ ստանալուն:

7.2 **Ձեր գրավի վրա կարող է բռնագանձում տարածվել , ինչպես նաև դուք կարող եք զրկվել Ձեր գույքից**

Եթե գրավի վաճառքից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.3 **Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ստանալու Ձեր վարկային պատմությունը ԱԲՌԱ վարկային բյուրոյից**

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

7.4 **Դուք իրավունք ունեք ստանալ հիշեցում առկա պարտավորության վերաբերյալ**

Պարտավորության կատարման օրից 1 օր առաջ վարկատուն Ձեր նախընտրած եղանակով կտեղեկացնի (sms, էլ. հասցե, փոստ) առկա պարտավորության մասին:

8. Հաստատում եմ, որ սույն թերթիկում ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են

_____ վարկատուի ստորագրություն

_____ ամսաթիվ (թերթիկի տրամադրման)

Վարկատուի անվանում _____

Գտնվելու վայր _____

Հեռ., էլ. հասցե _____

9. Հաստատում եմ, որ նախքան պայմանագրի կնքումը ստացել և հասկացել եմ սույն թերթիկում ներկայացված բոլոր տեղեկությունները

_____ վարկառուի ստորագրություն

_____ ամսաթիվ (թերթիկի ստացման)

Վարկառուի անուն, ազգանուն _____

Բնակության վայր _____

Հեռ., էլ. հասցե _____

Վարկատուի ներկայացուցչի անուն _____

Սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկի (այսուհետ՝ Անհատական թերթիկ) լրացման ուղեցույց

Սույն ուղեցույցը չի տրամադրվում վարկառուին

1. Սույն թերթիկի բաց թողնված հատվածներում վարկատուն լրացնում է անհատական թերթիկի տեքստերին համահունչ («Յունիկոդ») տառատեսակով, տառաչափով և համապատասխան գունային երանգներով:
2. ***Անհատական թերթիկի*** տրամադրումը վարկառուին պարտադիր է սպառողական վարկերի համար: Վարկատուի ցանկությամբ անհատական թերթիկ կարող է տրամադրվել նաև այլ վարկերի համար:
3. ***«Վարկատուի ապրանքային նշան»*** հատվածում տեղադրվում է վարկատուի պաշտոնական ապրանքային նշանը:
4. ***«№»*** նշանի դիմաց լրացվում է վարկատուի կողմից տրամադրվող Անհատական թերթիկի հերթական համարը:
5. ***«Սույն թերթիկի պայմանները գործում են մինչև»*** տողում լրացվում է սույն թերթիկում վարկատուի կողմից լրացված պայմանների վավերականության վերջնաժամկետը՝ ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:
6. ***«Հեռախոսահամար»*** մասում տեքստից տարբերվող՝ մեծ տառաչափով, աչքի ընկնող ձևով, լրացվում է վարկատուի հեռախոսահամարը: Ընդ որում, եթե առկա է կենտրոնացված թեժ գիծ, ապա նշվում է թեժ գծի հեռախոսահամարը, եթե ոչ՝ նշվում է այն հեռախոսահամարը, որի միջոցով վարկառուն կարող է առանց խոչընդոտների կապ հաստատել վարկատուի հետ:
7. ***«Վարկատուի անվանում»*** տողում լրացվում է վարկատու կազմակերպության ամբողջական անվանումը:
8. ***«1.1 Անվանում»*** տողում լրացվում են վարկատուի կողմից տրամադրվող սպառողական վարկի անվանումը և տեսակը: Օրինակ՝ «էքսպրես վարկ» սպառողական վարկ:
9. ***«1.2 Գումար»*** տողում լրացվում է վարկի գումարի արժեքը: Օրինակ՝ 800,000:
10. ***«1.3 Արժույթ»*** տողում լրացվում է վարկի արժույթը:
11. ***«1.4 ժամկետ»*** տողում լրացվում է վարկի ժամկետը ամիսներով: Օրինակ՝ 24:
12. ***«1.5 Տարեկան անվանական %»*** տողում լրացվում է վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը: Օրինակ՝ 18:
13. ***«1.6 Տարեկան փաստացի %»*** տողում լրացվում է վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը: Օրինակ՝ 19,70:
14. ***«2.1 Մարումների հաճախականություն»*** մասում համապատասխանաբար լրացվում են վարկի մայր գումարի և տոկոսագումարի մարման պարբերականությունները (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան և այլ): Եթե վարկատուի կողմից նախատեսված է վարկի մարման «այլ» հաճախականություն, ապա նշվում են պարբերականությունը և ձևը:
15. ***«2.2 կանխավճար»*** տողում լրացվում է վարկի կանխավճարի գումարի չափը: Օրինակ՝ 50,000: Կանխավճարի չափ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:
16. ***«4.1 1-ին մարման ամսաթիվ և գումար»*** տողում լրացվում են հաստատված վարկի համար նախնական ժամանակացույցով (վարկի հաստատման օրը հիմք ընդունելով որպես վարկի սկիզբ) կազմված 1-ին վճարի վճարման ամսաթիվը և գումարը: Սույն տողում նշվում է նաև, որ կարող է փոփոխվել՝ ելնելով պայմանագրի կնքման ամսաթվից:
17. ***«4.2 Մարման ընդհանուր գումար»*** տողում լրացվում է վարկի մայր գումարի, տոկոսագումարի և այլ վճարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 920,000:
18. ***«4.3 Մայր գումար»*** տողում լրացվում է վարկի մայր գումարի արժեքը: Օրինակ՝ 800,000:
19. ***«4.4 Տոկոսագումար»*** տողում լրացվում է վարկի տոկոսագումարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 700,000:
20. ***«4.5 Այլ վճարներ»*** տողում լրացվում է վարկի համար գանձվող այլ վճարների ընդհանուր գումարը՝ բացարձակ թվով: Օրինակ՝ 65,000 դրամ:

Բաց թողնված տողերում առանձին-առանձին լրացվում են գանձվող վճարի տեսակները (օրինակ՝ հայտի ուսումնասիրություն, սպասարկում, գրավի գնահատում և այլն) և վճարի չափերը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ), և պարբերականությունը (միանվագ):

Օրինակ՝ Հայտի ուսումնասիրություն 25,000 ՀՀ դրամ (միանվագ):

21. ***«5.1 Գրավ»*** տողում լրացվում են վարկի ապահովման միջոց հանդիսացող գրավի տեսակ(ներ)ը և նկարագրությունը: Օրինակ՝ 2014թ. «ԱԲԳՂ» մակնիշի ավտոմեքենա: Վարկի գրավի պահանջի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:
22. ***«5.2 Երաշխավորություն»*** տողում լրացվում է երաշխավոր(ներ)ի անունը և ազգանունը: Վարկի երաշխավորի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:
23. ***«6.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի մայր գումարը չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ 3 և ավելի աշխատանքային օր ուշացման դեպքում՝ ժամկետանց վարկի մնացորդի 2%, օրական:
24. ***«6.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի տոկոսագումարները չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ ժամկետանց վարկի մնացորդի 0.1%, օրական:
25. ***«6.3 Այլ վճարները չկատարելու դեպքում»*** տողում լրացվում է տվյալ վարկի գծով պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող այլ տույժ/տուգանքների չափը: Այլ տույժ/տուգանք սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:
26. ***«6.4 Մարումների հերթականություն»*** մասում լրացվում է վարկառուի կողմից պարտավորությունների մարման հերթականությունը (տույժ/տուգանքներ, տոկոսագումարներ, մայր գումար):

    Օրինակ՝

    1. Մայր գումար
    2. Տոկոսագումար

    .....

27. ***«9. Հաստատում եմ, որ սույն թերթիկում ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են»*** հաղորդագրության ներքո դրվում է վարկատուի պատասխանատու անձի ստորագրությունը և վարկառուին թերթիկի տրամադրման ամսաթիվը: Թերթիկը փոստային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով վարկառուին ուղարկելու դեպքում լրացվում է թերթիկի ուղարկման ամսաթիվը: Թերթիկը վարկառուին առձեռն տրամադրելու դեպքում լրացվում է թերթիկի փաստացի տրամադրման ամսաթիվը: Համապատասխանաբար լրացվում են վարկատուի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն, որի միջոցով վարկառուն կարող է սպառիչ տեղեկություններ ստանալ տրամադրվող վարկի վերաբերյալ:
28. ***«10. Հաստատում եմ, որ նախքան պայմանագրի կնքումը ստացել և հասկացել եմ սույն թերթիկում ներկայացված բոլոր տեղեկությունները»*** հաղորդագրության ներքո դրվում են վարկառուի ստորագրությունը և թերթիկի ստացման ամսաթիվը: Համապատասխանաբար լրացվում են վարկառուի անուն, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում), վարկատուի հետ վարկառուի կողմից ընտրված հաղորդակցման եղանակը:
29. ***«11. Ցանկանում եմ երաշխավորություն տրամադրել. ծանոթացել եմ պայմաններին և գիտակցում եմ երաշխավորության տրամադրման հետևանքները»*** հաղորդագրության ներքո դրվում են երաշխավորի ստորագրությունը և թերթիկի ստացման ամսաթիվը: Համապատասխանաբար լրացվում են երաշխավորի անուն, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում), վարկատուի հետ երաշխավորի կողմից ընտրված հաղորդակցման եղանակը:
30. Երաշխավորի բացակայության դեպքում տրամադրվում է համապատասխան թերթիկը, որտեղ 8-րդ և 11-րդ կետերով սահմանված տեղեկատվությունը չի արտացոլվում»:

ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ (ՕՎԵՐԴՐԱՖՏԻ)

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ №

Մինչև վարկային պայմանագիրը կնքելը վարկառուն պարտավոր է Ձեզ տրամադրել սույն թերթիկը:

Սույն թերթիկի պայմանները գործում են մինչև _____

Կարդացեք, մտածեք և նոր սարքագրեք: Հարցերի դեպքում՝ (հեռախոսահամար)

Վարկառուի անվանում _____

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1 Անվանում _____

1.2 Գումար _____

1.3 Արժույթ _____

1.4 ժամկետ _____

1.5 Տարեկան անվանական % _____
Հետաքրքրություն է Ձեր վարկի ծառայությունները:

1.6 Տարեկան փաստացի* %
Հետաքրքրություն է վարկի պրամադրման և սպասարկման պարտադիր վճարները: Հետաքրքրություն վարկերի նպատակի համար նիշք է ընտրել_____փոխարժեք:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Ապահովության համաձայնագրություն

- Մայր գումար _____
- Տոկոսագումար _____
- Այլ պարբերականություն և ձև _____

2.2 Կանխավճար _____

3. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 ժամկետից շուտ ամբողջած չափով մարել վարկը՝ առանց տուգանքների վճարելու:

3.2 ժամկետից շուտ վարկին ուղղված վճարումներ կատարելու դեպքում առանձնացնել վարկի մարման նոր գրաֆիկ:

3.3 Ընտրել վարկառուի հետ հաղորդակցվելու եղանակը (էլեկտրոնային, փոստային հասցե ...):

* Պայմանագրում և թերթիկում կարող են տարբերվել միայն տարեկան փաստացի տոկոսադրույքը, բանի որ, կախված պայմանագրի կնքման ամսաթվից փոխարժեքը կարող է փոփոխվել:

4. ՄԱՐՈՒՄՆԵՐ

4.1 Մարման ընդհանուր գումար _____
Ձեզ

4.2 Մայր գումար _____

4.3 Այլ վճարներ _____
Ձեզ թվով

1. _____ _____
2. _____ _____
3. _____ _____
4. _____ _____
5. _____ _____
6. _____ _____

5. ԱՊԱՀՈՎԱԳՈՒԹՅՈՒՆ

5.1 Գրավ _____

5.2 Երաշխավորություն _____

6. ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔ

6.1 Մայր գումարը վճարելու դեպքում _____

6.2 Տոկոսագումարները վճարելու դեպքում _____

6.3 Այլ վճարներ վճարելու դեպքում _____

6.4 ժամկետնեազ պարտավորություններ կատարելու դեպքում մարքանները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝

1. _____
2. _____
3. _____
4. _____

7. ՀԻՇԵՔ

7.1 Դուք կարող եք ձևավորել «վատ վարկային պատմություն»

Վարկի չմարման դեպքում Ձեր վարկային պատմությունը կվատանա, ինչը կխոչընդոտի հետագայում վարկ ստանալուն:

7.2 Ձեր գրավի վրա կարող է բռնագանձում տարածվել , ինչպես նաև դուք կարող եք զրկվել Ձեր գույքից

Եթե գրավի վաճառքից հնարավոր չէ բավարար գումար ստանալ,ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.3 Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ստանալու Ձեր վարկային պատմությունը ԱԲՌԱ վարկային բյուրոյից

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

7.4 Դուք իրավունք ունեք ստանալ հիշեցում առկա պարտավորության վերաբերյալ

Պարտավորության կատարման օրից 1 օր առաջ վարկատուն Ձեր նախընտրած եղանակով կտեղեկացնի (sms, էլ. հասցե, փոստ) առկա պարտավորության մասին:

8. ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է

8.1 Պայմանագիր կնքելուց առաջ տեղեկացնել, որ եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից:

8.2 Տրամադրել վարկային և երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:

8.3 Հաղորդակցումը իրականացնել Ձեր կողմից ընտրված եղանակով:

8.4 7 օր առաջ ծանուցել պայմանագրի պայմանների փոփոխության մասին:

8.5 1 օր առաջ հիշեցնել առկա պարտավորության վերաբերյալ:

8.6 Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնել այդ մասին:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ

